ՏԵՂԵԿԱՆՔ ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ԼՐԱՑՎՈՂ ԵՎ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 161.1 Կուսակցությանը անդամագրվելուն կամ անդամությունը դադարեցնելուն հարկադրելը կամ խոչընդոտելը

1. Կուսակցությանը անդամագրվելուն կամ անդամությունը դադարեցնելուն հարկադրելը կամ խոչընդոտելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է՝

1) երկու և ավելի անձանց նկատմամբ,

2) պաշտոնեական դիրքն օգտագործելով՝

պատժվում է կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Հոդված 161.2. Կուսակցություն խոշոր չափով ապօրինի նվիրատվություն ներգրավելը

1. Կուսակցության անդամի կողմից օրենքով չթույլատրված աղբյուրներից կամ օրենքով սահմանված առավելագույն չափը խոշոր չափով գերազանցող նվիրատվություն ներգրավելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից ութհարյուրապատիկի չափով կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով՝

պատժվում է ազատազարկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի իմաստով խոշոր չափ է համարվում նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող գումարին համարժեք նվիրատվությունը:

Հոդված 161.3. Կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված չափը օրենքով սահմանված աղբուրներից նվիրատվությունների արգելքը խոշոր չափով շրջանցելը

1.Նվիրատուի կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմաված չափը կամ օրենքով սահմանված աղբյուրներից նվիրատվությունների արգելքը այլ անձանց կողմից նվիրատվություն ձևակերպելու եղանակով շրջանցելը, որը կատարվել է խոշոր չափով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից ութհարյուրապատիկի չափով կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով:,

2. Նույն արարքը, որը կատարվել է

1) պաշտոնեական դիրքն օգտագործելով,

2) երկու և ավելի անձանց ներգրավելու միջոցով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի իմաստով խոշոր չափ է համարվում նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող գումարը:

Հոդված 161.4. Կուսակցությանը նվիրատվություն կատարելուն հարկադրելը

1. Կուսակցությանը նվիրատվություն կատարելուն հարկադրելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է

1) պաշտոնեական դիրքն օգտագործելով,

2) երկու և ավելի անձանց նկատմամբ՝

պատժվում է կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով»:

Հոդված 314.2. Հայտարարագրերը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով դիտավորությամբ չներկայացնելը

(վերնագիրը փոփ. 21.01.20 ՀՕ-72-Ն)

1. «Հանրային ծառայության մասին» և «Կուսակցությունների մասին» օրենքներով ~~Հայաստանի Հանրապետության օրենքով~~ սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագրերը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին կամ 4-րդ մասով սահմանված վարչական տույժի կիրառումից հետո՝ 30 օրվա ընթացքում, դիտավորությամբ չներկայացնելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հազարհինգհարյուրապատիկից երկուհազարապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

(314.2-րդ հոդվածը լրաց. 09.06.17 ՀՕ-102-Ն, փոփ. 24.06.19 ՀՕ-96-Ն, 21.01.20 ՀՕ-72-Ն, 25.03.20 ՀՕ-207-Ն)

Հոդված 314.3. Հայտարարագրերում կեղծ տվյալ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելը

1. «Հանրային ծառայության մասին» և «Կուսակցությունների մասին» օրենքների ~~Հայաստանի Հանրապետության օրենքի~~ իմաստով հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագրերում կեղծ տվյալ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից երեքհազարապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

2. Նույն արարքը, որը հանգեցրել է առանձնապես խոշոր չափերով գույքի կամ եկամտի չհայտարարագրմանը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից չորս տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

(314.3-րդ հոդվածը լրաց. 09.06.17 ՀՕ-102-Ն, փոփ. 25.03.20 ՀՕ-207-Ն)

Հոդված 4. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2022 թվականի հունվարի 1-ից: